

**«Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ» ԲԲԸ  
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ  
2023թ. ավարտվող տարվա համար**

ՀՎՀՀ՝ 02671187

Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար: 273.130.998368

Իրավաբանական և գործունեության հասցեներ՝

Իրավաբանական հասցե՝ Զ. Երևան, Փափագյան 8

Գործունեության հասցե՝ Մ.Խորենացի 33, 6-րդ հարկ  
Ավան Աճառյան 31/37

---

**Բովանդակություն**

1. Ղեկավար անձնակազմի / տնօրեն( ներ ) ի զեկույց
2. Անկախ աուդիտորական եզրակացություն
3. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
4. Շահույթի կամ վնասի եվ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
5. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
6. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
7. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. «Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ»-ի (այսուհետ՝ Ակումբ) գլխավոր տնօրենի զեկույց

31.12.2023թ. ավարտվող տարվա համար ղեկավար անձնակազմը/տնօրենները, ֆինանսական հաշվետվություններին և անկախ ատղիտորական եզրակացությանը զուգահեռ, ներկայացնում են ակումբի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց:

**Առանցքային գործունեություն**

«Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբը» (նախկին անվանումները՝ «Ավան Ակադեմիա ֆուտբոլային ակումբ», «Արարատ-Մոսկվա ֆուտբոլային ակումբ») ստեղծվել է 2017 թվականի ամռանը: 2017/18 մրցաշրջանում ակումբը հանդես է եկել Հայաստանի առաջին խմբի առաջնությունում՝ զբաղեցնելով երրորդ մրցանակային հորիզոնականը, իսկ Հայաստանի գավաթի խաղարկությունում ավարտել է իր մրցելույթները քառորդ եզրափակիչում: 2018/19 մրցաշրջանից Արարատ-Արմենիան հանդես է գալիս ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունում, և բարձրագույն խմբում մասնակցության առաջին իսկ տարում թիմը հռչակվեց Հայաստանի չեմպիոն, իսկ այնուհետև նվաճեց իր երկրորդ տիտղոսը՝ դառնալով Հայաստանի սուպերգավաթակիր: Դառնալով չեմպիոն՝ ակումբը իրավունք ստացավ մասնակցելու ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող ակումբային մրցաշարերում, և կարողացավ գրանցել հայկական ակումբային ֆուտբոլի պատմության մեջ այդ պահին լավագույն արդյունքը՝ հասնելով մինչև ՈՒԵՖԱ Եվրոպա Լիգայի որակավորման փլեյ-օֆֆ փուլ: Հաջորդող տարին ևս հաջող էր ակումբի համար: 2020 թվականին, չնայած համաճարակային սահմանափակումներին, թիմը նույնպես հռչակվեց Հայաստանի չեմպիոն, ինչից հետո կրկնեց ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերում նախորդ տարվա արդյունքը: Ակումբը մշտապես պայքարել, և պայքարում է բարձր խաղամակարդակով հանդես գալու համար, ինչպես նաև միտված է զարգացնելու հայկական ֆուտբոլը: Մշտապես մասնակցում է եվրոպական ակումբային մրցաշարերին՝ անելով առավելագույնը հավուր պատշաճի հանդես գալու համար այդ ասպարեզում:

«Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ» բաց բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությունը, իսկ հիմնական ֆինանսավորումը ակումբը ստանում է «Տաշիր» բարեգործական հիմնադրամից, «Տաշիր» ընկերությունների խմբի անվանումը տեղակայված է նաև ակումբի թիմերի մարզաշապիկի դիմային հատվածում՝ որպես տիտղոսային հովանավոր:

Կարծում ենք առանձնահատուկ ուշադրություն կարելի է դարձնել այն հանգամանքին, որ, ի տարբերություն ՀՀ տարածքում գործող ակումբների բացարձակ մեծամասնության, «Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի» կազմակերպատիրական ձևը բաց բաժնետիրական ընկերությունն է: Համարում ենք դա կարևորագույն գործոն, որը հնարավորություն կտա ապագայում իրականացնել ակումբի բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխում՝ ներգրավելով նոր բաժնետերեր և, համապատասխանաբար, ֆինանսական միջոցներ ակումբի հետագա զարգացման համար:

«Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ»-ի առաջնային նպատակն է ամրապնդել ֆուտբոլային մշակույթը Հայաստանում ինչպես խաղաղաշտում, այնպես էլ դրա սահմաններից դուրս՝ երկրպագուների հետ աշխատանքներում, առցանց հարթակներում, տեղեկատվական և մարկետինգային ուղղություններում: Որպես ուղենիշ ընտրված է եվրոպական լավագույն ակումբների աշխատելաոճը:

## Բիզնեսի նկարագիր

«Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբը կարևորում է ֆուտբոլի զարգացումը ինչպես պրոֆեսիոնալ մակարդակում, այնպես էլ մանկապատանեկան և կանանց ֆուտբոլի հարցում: Ակումբի կազմում գործում են երկու պրոֆեսիոնալ մանկապատանեկան տասը և կանանց մեկ թիմեր: Այս պահին արդեն մոտ երեք հարյուր երեխա մարզվում են մեր ակումբի մանկապատանեկան թիմերում, նրանց մի մասը արդեն մեծ հեռանկարներ ունեն մեր ակումբի պրոֆեսիոնալ թիմերի շարքերը համարելու համար: Ակումբը այս պահին ունի կանանց ֆուտբոլի մեկ պրոֆեսիոնալ թիմ, և շարունակում է աշխատանքներ կատարել նրանց խաղամակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ակումբի ղեկավարությունը սերտ համագործակցում է բոլոր մարզիչների հետ, տարիքային բոլոր թիմերին ապահովել է անհրաժեշտ հանդերձանքով և մարզագույքով, միանշանակ հոգալու է բոլոր խաղերի սպասարկման ծախսերը՝ ճանապարհածախս, օրապահիկ և այլն: Մարզիչները, իրենց հերթին, պատասխանատվության մեծ զգացումով են աշխատում պատանի հերթափոխի հետ, սերտորեն համագործակցում են պատանիների ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում դիմում Ակումբի ղեկավարությանը:

Ակումբի և մանկապատանեկան թիմերի մարզիչների առաջնահերթ նպատակը պատանի ֆուտբոլիստների համակողմանի զարգացումը և որակյալ հերթափոխի պատրաստումն է, ինչպես նաև թիմային բարձր արդյունքների արձանագրումն ու Ակումբի հեղինակության բարձրացումը:

Նախատեսվում է պարբերաբար հանդիպումներ և մասնագիտական խորհրդակցություններ կազմակերպել Ակումբի գլխավոր մարզչի ղեկավարությամբ, որին կմասնակցեն գլխավոր թիմի մարզչական շտաբի մյուս անդամները, մանկապատանեկան և կանանց թիմերի մարզիչները: Այս միջոցառումները որոշակիորեն կնպաստեն վերջիններիս պրոֆեսիոնալ մակարդակի աճին: Այս առումով, իհարկե, անգնահատելի են ուսումնական այն դասընթացները, որոնք կազմակերպվում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում: Ուսումնառության գործընթացը շարունակական է, և Ակումբի մարզիչները հետագայում ևս կմասնակցեն ՀՖՖ-ի կազմակերպած մարզչական դասընթացներին և կբարձրացնեն իրենց մասնագիտական որակավորումը:

Ակումբը մեծ նշանակություն է տալիս դրական հանրային կերպար ստեղծելուն ուղղված աշխատանքներին, «Արարատ-Արմենիայի» էջերը սոցիալական ցանցերում ունեն դինամիկ զարգացում, օրեցօր ներգրավվում է նոր հետևորդներ, որոնք ակտիվ մասնակցում են հանրային քննարկումներին և անընդհատ կապի մեջ են ակումբի մեղիա ծառայության հետ: Այսօր արդեն ակումբի պաշտոնական էջերին սոցցանցերում բաժանորդագրված է մոտ 30.000 հետևորդ:

«Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ»-ը նաև կարևորում է երկրպագուների ներգրավումը մարզադաշտում և հաճախելիության ավելացումը: Ակումբի պատմության ժամանակահատվածում արդեն ձևավորվել է ակտիվ ֆան-ակումբ, որի քանակն աստիճանաբար ավելանում է, իսկ աջակցությունը ոգևորում է ֆուտբոլիստներին նոր հաջողություններ գրանցել:

Վերջին տարիներին մեծ կարևորություն է տրվում նաև ֆուտբոլի միջոցով սոցիալական պատասխանատվության բարձրացմանը: Մասնավորապես, ակումբը մշակել է

Ֆուտբոլի սոցիալական պատասխանատվության քաղաքականությունը և աշխատանքները է իրականացնում դրա շրջանակում, տարբեր ուղղություններով, մշակված քաղաքականությունների իրականացման համար: Քաղաքականությունները վերաբերում են ներառականության ապահովմանը, առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի խթանմանը, հակախտրական վարքի ամրապնդմանը, բնապահպանական խնդիրներին և այլն:

Ակումբի զարգացման նոր մակարդակ կլինի սեփական մարզաբազայի և մարզադաշտի կառուցումը: Ակումբին պատկանող ենթակառուցվածքը հնարավորություն կտա ավելացնել ակադեմիայում ուսանող երեխաների քանակը, բարելավել նրանց մարզումային պայմանները: Առաջիկա տարիներին հենց այս նախագծի իրականացումը պետք է դառնա ակումբի որակական բարելավման և նոր մակարդակի անցնելու գրավականը:

### Տնօրեններ

Հաշվետու տարվա համար տնօրենների պաշտոն զբաղեցրած անձինք

- Պողոս Արտուշի Գալստյան 08/02/2018թ. - առ այսօր

### Տնօրենների անձնական շահեր

Ակումբի տնօրենները կազմակերպության պարտատոմսերի և բաժնետոմսերի սեփականատերի թվում ներգրավված չեն և անձնական շահեր չունեն:

ք. Երևան, Փափազյան 8

Գլխավոր տնօրեն Պողոս Գալստյան





## Անկախ աուդիտորական եզրակացություն

### « Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ » ԲԲԸ-ի մասնակիցներին,

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբ» ԲԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

#### Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *“Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար”* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *“Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի”* (ՀԷՄՄԽ կանոնագրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն A.1-ի վրա, որտեղ նշվում է, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գուտ ակտիվների արժեքը 2,516,881 հազար դրամ պակաս է կանոնադրական կապիտալից: Այս դեպքերը կամ իրավիճակները, ի թիվս Ծանոթագրություն A.1-ում նշված այլ հարցերի, ցույց են տալիս, որ առկա է անորոշություն, որը կարող է կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ:

Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

#### Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է

խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածատնություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

08 ապրիլի 2023թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար



### 3. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծանոթագրություն	31.12.2023 Արժույթ'000	31.12.2022 Արժույթ'000
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և համարժեքներ		3,896	3,677
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով			-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով			-
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր		87,051	120,516
Ընթացիկ հարկային ակտիվներ			292
Պաշարներ		8,706	12,743
Փոխառություններ		36	456
Այլ ընթացիկ ակտիվներ		8,155	-
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>107,844</b>	<b>137,684</b>
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ		17,864	8,454
Ոչ նյութական ակտիվներ - խաղացողներ		16,500	-
Ոչ նյութական ակտիվներ – այլ		459	2,089
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով			-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով			-
այլ ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր			-
Հետաձգված հարկային ակտիվներ		272,199	329,388
Ներդրումներ		-	-
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>307,022</b>	<b>339,931</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>414,866</b>	<b>477,615</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Բանկային օվերդրաֆտներ			-
Բանկային և այլ վարկեր			-
Կրեդիտորական պարտքեր խմբին / կապակցված կողմերին			-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով			-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և և դրան հավասարեցված այլ վճարումների գծով		8,970	7,624
Կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային մարմիններին		13,889	13,100
Այլ կրեդիտորական պարտքեր		8,042	15,204
Հաշվեգրումներ և հետաձգված եկամուտներ			
Կարճաժամկետ պահուստներ		81,531	70,779
Փոխառություններ		2,819,315	2,036,146
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2,931,747</b>	<b>2,142,853</b>



**Ոչ ընթացիկ պարտավորություններ**

Բանկային և այլ վարկեր	-	
Կրեդիտորական պարտքեր խմբին/կապակցված կողմերին		
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով	-	
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով		
Կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային մարմիններին		
Այլ հարկային պարտավորություններ		
Այլ կրեդիտորական պարտքեր		
Հաշվեգրումներ և հետաձգված եկամուտներ		
Հետաձգված հարկային պարտավորություններ		
Երկարաժամկետ պահուստներ		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		

**Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** -

**Ընդամենը պարտավորություններ** 2,931,747 2,142,853

**Ջուտ ակտիվներ/(պարտավորություններ)** 2,931,747 2,142,853

**Սեփական կապիտալ**

Բաժնետիրական/կանոնադրական կապիտալ	10,000	10,000
Չբաշխված շահույթ/վնաս	-2,526,881	-1,675,238
Պահուստներ	-	-
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>-2,516,881</b>	<b>-1,665,238</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 08.04.2024թ և ենթակա են հրապարակման

**Ֆինանսական պատասխանատու** **Գ. Թառլամազյան**

**Գլխավոր տնօրեն՝** **Պ. Գալստյան**





## 4. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

31.12. 2023 ավարտվող տարվա համար

Ցուցանիշի անվանումը	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՈւԵՖԱ-ի և ՀՖՖ-ի համերաշխության և մրցանակային գումարներ	332,540	233,705
Տոմսերի վաճառքից եկամուտ	-	-
Խաղացողների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)	122,451	21,160
Եկամուտներին վերաբերող շնորհներ	230,479	582,003
Հեռարձակման իրավունքներ	6,599	1,569
Այլ առևտրային	438	456
Այլ եկամուտներ	8,655	21,428
Ընդամենը եկամուտներ	701,162	860,321
Վաճառքի (կտրված) ինքնարժեք	(269)	(247)
Ֆուտբոլիստներ/ֆուտբոլիստներին վճարվող աշխատավարձ և այլ եկամուտներ	(775,685)	(856,054)
Աշխատակիցների աշխատավարձի գծով ծախսեր	(323,085)	(291,171)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մաշվածություն	(8,454)	(9,236)
Մարզադաշտի վարձակալություն	(88,821)	(80,469)
Տրանսպորտային ծախսեր	(9,115)	(9,094)
Հյուրանոցային ծախսեր	(83,057)	(10,405)
Դեղորայքի և սննդի ձեռքբերման ծախսեր	(19,348)	(21,667)
Ավիատոմսերի գծով ծախսեր	(88,846)	(72,685)
Բժշկական հետազոտության, առողջության գծով ծախսեր	(9,878)	(13,346)
Մպորտային արտահագուստի և այլ պարագաների գծով ծախսեր	(17,284)	(29,345)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս	(4,334)	(4,087)
Վարչական ծախսեր	(10,306)	(5,096)
Գործառնական այլ ծախսեր	(86,245)	(154,887)
Ընդամենը գործառնական ծախսեր	(1,524,727)	(1,557,789)
Գործառնական շահույթ (վնաս)	(823,565)	(697,468)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	29,111	23,335
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (Ֆուտբոլիստի գրանցում)	(5,039)	(3,021)
Ոչ նյութական ակտիվների օտարումից (Ֆուտբոլիստ) օգուտ/վնաս	-	-
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործառնական/միջնորդներին)	(12,389)	(10,230)



և խաղացողների վարձակալության վճարներ)		
Զուտ օգուտ/վնաս փոխարժեքային տարբերությունից	46,522	36,577
Տոկոսային եկամուտներ	17	9
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը	(794,454)	(674,133)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(57,189)	115,698
Ընդամենը զուտ շահույթ (վնաս)	(851,643)	(558,435)
Այլ համապարփակ Ֆինանսական արդյունք	-	-
Ընդհանուր համապարփակ Ֆինանսական արդյունք	(851,643)	(558,435)

Ֆինանսական պատասխանատու

Գ. Թադևանյան

Գլխավոր տնօրեն՝

Պ. Գալստյան



**5. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000	(1,116,803)	(1,106,803)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(558,435)	(558,435)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000	(1,675,238)	(1,665,238)
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(851,643)	(851,643)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000	(2,526,881)	(2,516,881)

Ֆինանսական պատասխանատու

Գ. Թառլամազյան

Գլխավոր տնօրեն՝

Պ. Գալստյան



## 6. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն – ուղղակի մեթոդ

31.12. 2023 ավարտվող տարվա համար

	2023 Արժույթ'000	2022 Արժույթ'000
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
Դրամական միջոցներ տոմսերի իրացումից		
Դրամական միջոցներ Շնորհներից և անհատույց ստացումներից	230,479	580,880
Դրամական միջոցներ հեռարձակման իրավունքներից	6,513	1,569
Դրամական միջոցներ առևտրային գործունեությունից	63,475	21,278
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից	332,583	233,454
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների դիմաց	-423,570	-323,697
Վճարումներ աշխատակիցներին և հոգուր նրանց	-931,533	-965,371
Վճարում բյուջե	-101,695	-170,311
Վճարումներ գործակալներին/միջնորդներին	-6,101	-1,362
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց	-20,980	-11,170
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զույր հոսք</b>	<b>-850,829</b>	<b>-634,730</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		
Դրամական միջոցներ խաղացողների գրանցման օտարումից	61,052	2,004
Վճարումներ խաղացողների գրանցումներ ձեռք բերելու նպատակով	-26,570	-7,830
Դրամական միջոցներ հիմնական միջոցների օտարումից		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց	-10,621	-6,783
Դրամական միջոցներ այլ ոչ ընթացիկ ակտիվների օտարումից		
Վճարումներ այլ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու նպատակով		
Դրամական միջոցներ ֆինանսական ներդրումների օտարումից		
Վճարումներ նոր ֆինանսական ներդրումներ ձեռք բերելու նպատակով		
Դրամական ներհոսքեր/(արտահոսքեր) այլ ներդրումային գործունեությունից		
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զույր հոսք</b>	<b>23,861</b>	<b>-12,609</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		
Դրամական միջոցներ փոխառություններից	1,180,798	870,771
Փոխառությունների մարում	-351,969	-217,449
Դրամական միջոցներ փոխառություններից – ֆինանսական կազմակերպություններ	-	-
Տրամադրված փոխառություն	-1,370	-11,970



Ֆուտբոլիսպորտի/մարզիչների	-	-
Դրամական միջոցներ սեփական/բաժնետիրական կապիտալում ներդրումներից	-	-
Վճարված շահաբաժիններ	-	-
Դրամական միջոցներ պարտավորումների թողարկումից	-	-
Պարտավորումների գծով վճարումներ	-	-
Վճարումներ հեղ գնված կապիտալի գծով	-	-
Դրամական միջոցների ներհոսք/(արտահոսք) այլ ֆինանսական գործունեությունից	-	-
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զույգ հոսք</b>	<b>827,459</b>	<b>641,352</b>
<b>Դրամական միջոցների զույգ աճ/նվազում</b>	<b>491</b>	<b>-5,987</b>
<b>Ճշգրտումներ</b>		
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	3,677	9,938
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների զույգ արդյունք	-272	-274
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	<b>3,896</b>	<b>3,677</b>

Ֆինանսական պատասխանատու

Գ. Թադևանյան

Գլխավոր տնօրեն՝

Պ. Գալստյան



## 7. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

31.12.2023թ. ավարտվող տարի

### A. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի մեթոդի հիման վրա՝ անընդհանրության սկզբունքով:

#### Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուրսակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համապարփակ հաշվետվությունում՝ նվազեցնելով հիմնական միջոցների սկզբնական կամ վերագնահատված արժեքը (բացառությամբ հողի և օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների) օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը հետևյալ համամասնությամբ՝

Ծեփեր, շինություններ (ներառյալ մարզադաշտ)	5 % տարեկան
Կառուցվածքներ և սարքավորումներ	20 % տարեկան

Ֆինանսական վարձակալությամբ ստացված ակտիվների գծով մաշվածությունը հաշվարկվում է նույն մեթոդաբանությամբ՝ օգտակար տնտեսական ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, իսկ երբ ժամկետները հարաբերականորեն կարճ են, կիրառվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և դրա հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

#### Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ - խաղացողներ

Տրանսֆերային և խաղացողների գրանցման ձեռքբերմանն ուղղված այլ բնորոշ ծախսերը կապիտալացվում են որպես ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ: Այս ծախսերը տարեկան հավասար մասնաբաժիններով ամբողջությամբ ամորտիզացվում են խաղացողների համապատասխան պայմանագրային ժամկետին զուգընթաց: Տվյալ ակտիվի մանկապատասխանական թիմերից փոխադրվող խաղացողներին առնչվող ծախսերը կապիտալացման ենթակա չեն:

Եթե պայմանագրի ժամկետը վերանայվում է, չամորտիզացված գումարը, ինչպես նաև պայմանագրային ժամկետների երկարաձգման առնչվությամբ ծագած նոր ծախսերը, ամորտիզացվում են համաձայն նոր պայմանագրի:

Ցանկացած տրանսֆերային վճար, որի իրականացումը պայմանավորված է մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի արդյունքից, կապիտալացվում է, երբ հավանական է, որ այդ իրադարձությունը տեղի կունենա:

Խաղացողների գրանցումներն արժեզրկման արդյունքում դուրս են գրվում, երբ դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է վաճառքի կամ օգտագործման փոխհատուցվող գումարը:

#### Հասույթ

Հասույթը կազմակերպության առօրյա գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է՝ բացառությամբ խաղացողների գրանցման վաճառքի դիմաց տրանսֆերային վճարներից և առնչվող հարկերից:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով և ներկայացնում է շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքի կամ ծառայության մատուցման դիմաց վճարվող գումար՝ առանց զեղչերի և համապատասխան հարկերի:

**Տոմսերի իրացում/խաղային օրերի հասույթ**

Խաղային օրերի հասույթը ճանաչվում է հաշվետու տարվա ընթացքում. յուրաքանչյուր խաղային օրվա հասույթ պետք է ճանաչվի, միայն երբ խաղային հանդիպումն արդեն իսկ կայացել է: Խաղային օրվա հասույթը, որը ստացվել է որպես կանխավճար մինչև հաշվետու տարվա ավարտը, սակայն վերաբերում է հաջորդ մրցաշրջանին (օրինակ՝ տոմսերի սեզոնային վաճառք), պետք է ձևակերպվի որպես հետաձգված եկամուտ (հասույթ) և ճանաչվի խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց:

**Հովանավորչություն և գովազդ**

Հովանավորչությունն ու գովազդն ընդգրկում են ակումբի գլխավոր հովանավորին, այլ հովանավորների, մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդը, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի հովանավորչություն և գովազդային գործունեություն:

**Հեռարձակման իրավունքներ**

Հեռարձակման իրավունքներից հասույթն իրենից ներկայացնում է ՋԼՄ-ների հետ կնքված տնային պայմանագրերից ստացվող միջոցները: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի:

**Առևտրական հասույթ**

Առևտրային հասույթը բաղկացած է մանրածախ իրացումներից, սնունդի և խմիչքի վաճառքից, համագումարների կազմակերպումից (ոչ խաղային օրերին), վիճակահաղերի կազմակերպումից և այլ կերպ չդասակարգված առևտրային հասույթից:

**ՌԻԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ**

ՌԻԵՖԱ-ի մրցանակային գումարները ՌԻԵՖԱ ակումբային մրցաշարերին մասնակցության դիմաց ստացվող միջոցներն են: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի: ՌԻԵՖԱ համերաշխության վճարները պետք է ճանաչվեն, երբ ստացվելիք գումարը դառնում է որոշակի:

**Այլ եկամուտներ**

Այլ եկամուտներն ընդգրկում են նվիրատվությունները, դրամաշնորհները, ցանկացած տեսակի արտասովոր գործառնական եկամուտները, ինչպես նաև նախորդ հինգ խմբերում չդասակարգված այլ եկամուտներ:

**A.1 Անընդհատություն**

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ակտիվների արժեքը 2,516,881 հազար դրամ պակաս է կանոնադրական կապիտալից:  
Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի նվազումը: Այս գործոնների առկայությունը կասկածներ են առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ:  
Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը:

**B. Հասույթ**

	2023 <u>Արժույթ'000</u>	2022 <u>Արժույթ'000</u>
<b>Տոմսերի իրացում</b>	-	-
Ազգային առաջնություն		
ՈՒԵՖԱ ակումբային առաջնություն		
Սեզոնային փոմսեր		
Անդամավճարներ		
Այլ		
<b>Հովանավորչություն և գովազդ</b>	-	-
Մարզահագուստի հովանավոր (արտադրող)		
Հիմնական վերնաշապիկի հովանավոր		
Մարզադաշտի հովանավոր		
Մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդ		
Այլ		
<b>Հեռարձակման իրավունքներ</b>	6,599	1,569
Ազգային առաջնություն		
Այլ	6,599	1,569
<b>Առևտրական գործունեություն</b>	438	456
Ազգային առաջնություն		
Մանրածախ վաճառք	438	456
Շենք-շինությունների շահագործում ոչ խաղային օրերի		
Անդամավճարներ (ոչ խաղային օրերի)		
Այլ		
<b>ՈՒԵՖԱ համերաշխության և մրցանակային գումարներ</b>	332,540	233,705
Հեռարձակման իրավունքներ, գովազդային, մրցանակային գումարներ	254,014	183,375
Համերաշխության վճարներ	64,526	30,830
Այլ /ՀՖՖ/	14,000	19,500
<b>Այլ գործառնական եկամուտներ</b>	230,479	582,003
Սուբսիդիաներ, նվիրատվություններ և այլ գումարներ		523
Ֆուտբոլային մարմինների կողմից		
Սուբսիդիաներ, դրամաշնորհներ և այլ գումարներ կառավարությունից		
Աջակցություններ/նվիրատվություններ չկապակցված կողմերից	230,479	581,480
Աջակցություններ/նվիրատվություններ կապակցված կողմերից		
Ոչ ֆուտբոլային գործառնություններից եկամուտ		
Արտասովոր եկամուտ		
Այլ եկամուտներ /վարձակալությունից/	122,451	21,160





**C. Աշխատակիցների վարձարության ծախսեր**

	2023 Արժույթ'000	2022 Արժույթ'000
<b>Խաղացողներ</b>		
Աշխատավարձ	677,659	746,980
Հարկային/սոցապ հատկացումներ	95,152	106,070
Այլ	2,874	3,004
	<b>775,685</b>	<b>856,054</b>
<b>Այլ աշխատակիցներ</b>		
Աշխատավարձ	256,646	231,363
Հարկային/սոցապ հատկացումներ	63,080	56,797
Այլ	3,359	3,011
	<b>323,085</b>	<b>291,171</b>
	<b>1,098,770</b>	<b>1,147,225</b>


**D. 1 Այլ գործառնական ծախսեր**

	2023 Արժույթ'000	2022 Արժույթ'000
Խաղային օրվա ծախսեր		
Հովանավորչական և գովազդային ծախսեր		
Առևտրական գործառնությունների ծախսեր		
Հիմնական միջոցների սպասարկման և վերանորոգման ծախսեր		
Ոչ ֆուրբոլային գործառնությունների գծով ծախսեր		
Արտասովոր ծախսեր		
Այլ գործառնական ծախսեր	86,245	154,887
<b>Ընդամենը այլ գործառնական ծախսեր</b>	<b>86,245</b>	<b>154,887</b>

**D. 2 Ոչ գործառնական եկամուտներ/ծախսեր**

Ոչ գործառնական եկամուտը իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքների փարբերությունը

եկամուտների գծով այն կազմում է	53,532	43,303
ծախսի գծով կազմում է	-7,010	-6,726
ընդամենը եկամուտ	46,522	36,577
Ոչ գործառնական ծախս՝		
Գործակալներ/միջնորդներ/մարզումային	-12,389	-10,230
Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիա	-5,039	-3,021
<b>Ընդամենը</b>	<b>29,094</b>	<b>23,326</b>
<b>Տոկոսային եկամուտներ</b>	<b>17</b>	<b>9</b>



**E. Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ – Հիմնական միջոցներ**

	Մարզա- դաշտ Արժույթ'000	Հող և շի- նություններ Արժույթ'000	Սարքա- վորումներ Արժույթ'000	Այլ Արժույթ'000	Ընդամենը Արժույթ'000
<b>Սկզբնական կամ վերագնահատված արժեք</b>					
Ժամանակաշրջանի սկիզբ			30,269	1,629	31,898
Ավելացում			13,218	724	13,942
Օտարում			-10,370	-	-10,370
Վերագնահատումից աճ			-	-	-
Ժամանակաշրջանի վերջ	-	-	33,117	2,353	35,470
<b>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</b>					
Ժամանակաշրջանի սկիզբ			22,644	800	23,444
Հիմնական միջոցների մաշվածություն			4,086	446	4,532
Օտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածություն			-10,370	-	-10,370
Հիմնական միջոցների արժեզրկում			-	-	-
Ժամանակաշրջանի վերջ	-	-	16,360	1,246	17,606
<b>Հաշվեկշռային արժեք</b>					
Ժամանակաշրջանի սկիզբ	-	-	7,625	829	8,454
Ժամանակաշրջանի վերջ	-	-	16,757	1,107	17,864

**F. Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ**

	Խաղացողների գրանցումներ Արժույթ'000	Այլ Արժույթ'000	Ընդամենը Արժույթ'000
<b>Սկզբնական կամ վերագնահատված արժեք</b>			
Ժամանակաշրջանի սկիզբ	14,304	7,984	22,288
Ավելացում	21,539	2,292	23,831
Օտարում	-14,304	-7,984	-22,288
Վերագնահատումից արժեքի աճ Ժամանակաշրջանի վերջ	21,539	2,292	23,831



**Կուրակված ամորտիզացիա և արժեզրկում**

Ժամանակաշրջանի սկիզբ	14,304	5,895	20,199
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	5,039	3,923	8,962
Օգտարված ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	-14,304	-7,985	-22,289
Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների արժեզրկում	-	-	-
Ժամանակաշրջանի վերջ	5,039	1,833	6,872

**Հաշվեկշռային արժեք**

Ժամանակաշրջանի սկիզբ	-	2,089	2,089
Ժամանակաշրջանի վերջ	16,500	459	16,959

**G. Բանկային օվերդրաֆտներ, վարկեր, փոխառություններ**

	2023 Արժույթ'000	2022 Արժույթ'000
Բանկային օվերդրաֆտներ		
Ընթացիկ բանկային վարկեր և փոխառություններ (ցպահանջ կամ ենթակա վճարման մինչև 12 ամիս ժամկետում)	3,051,276	2,036,146
Ոչ ընթացիկ բանկային վարկեր և փոխառություններ (ենթակա վճարման 12 ամսից երկար ժամկետում)		
	3,051,276	2,036,146

**Վարկերի և փոխառությունների հատուցման ժամանակացույց**

	2023 Արժույթ'000	2022 Արժույթ'000
<b>Փոխառությունների ժամկետներ</b>		
Ցպահանջ	3,051,276	2,036,146
Մինչև 12 ամիս երկրորդ փարում		
Երրորդից հինգերորդ (ներառյալ) փարում		
Հինգ փարի անց	3,051,276	2,036,146



**H. Պահուսպներ**

Պահուսպներ	Պահուսպ [1]	Ընդամենը Արժույթ'000
Ժամանակաշրջանի սկիզբ	70,779	70,779
Պահուսպի համալրում	10,752	10,752
Պահուսպի օգտագործում	-	-
Պահուսպի օտարում	-	-
Ժամանակաշրջանի վերջ՝	81,531	81,531
Ներառված ընթացիկ պարտավորություններում	81,531	81,531
Ներառված ոչ ընթացիկ պարտավորություններում	-	-

**I. Կառավարող կողմ**

Կազմակերպությունը չունի վերջնական կառավարող կողմ :



**Ե. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Հաշվեկրու տարվա ընթացքում կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները՝

Եկամուտ		Ծախսեր	
2023	2022	2023	2022
Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000

Մայր կազմակերպություն

Դուստր կազմակերպություններ

Ասոցիացված/Նշանակալի ազդեցությամբ  
կազմակերպություններ

-	-	-	-
---	---	---	---

Հաշվեկրու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են՝

Եկամուտ		Ծախսեր	
2023	2022	2023	2022
Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000	Արժույթ՝ 000

Մայր կազմակերպություն

Դուստր կազմակերպություններ

Ասոցիացված/Նշանակալի ազդեցությամբ  
կազմակերպություններ

-	-	-	-
---	---	---	---

Կապակցված կողմերի հետ գործարքներ

Կազմակերպությունը հաշվետու տարում չի իրականացրել գործարքներ կապակցված կողմերի հետ և չունի համապատասխան ղեկիտողական կամ կրեդիտորական պարտքեր:



**Կ. Պայմանական պարտավորություններ**

Կազմակերպությունը չի կնքել պայմանագրեր, որոնք նախատեսում են ապագա վճարումներ՝ կախված որևէ իրադարձության տեղի ունենալուց կամ չունենալուց:

**Լ. Հաշվեպրու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Կազմակերպությունը չի կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք, կախված ապագա որևէ դեպքի/դեպքերի տեղի ունենալուց կամ չունենալուց, ենթադրում են հետագա վճարումներ:

**Մ. Վճարներ գործակալներին/միջնորդներին**

Հաշվեպրու տարվա ընթացքում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ վճարումները միջնորդներին գործառնությունների և/կամ պայմանագրերի վերանայման արդյունքում:

Վճարներ գործակալներին/միջնորդներին	2023 [արժույթ]	2022 [արժույթ]
Տարվա ընթացքում կատարված վճարումներ (ծախսեր)	6,071	3,316

**Ք. Շահութահարկի գծով ծախս**

Շահութահարկը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ 18% (2022թ 18%):

Հարկեր	2023 Արժույթ'000	2023 %	2022 Արժույթ'000	2022 %
Ընթացիկ հարկեր	-	18	-	18
Հետաձգված հարկեր	-57,189		115,698	
Շահույթ մինչև հարկումը	-794,454		-674,133	



*Ararat-Armenia Football Club OJSC*

*Annual financial statements*

